

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝  
Մ.Գ.Թ., ԴՈՑԵՆՏ Հ.ՔԻՇԿՐՅԱՆ



**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ**

Արփի Աշոտի Լազարյանի՝ «Ազատագրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչները և դրանց կիրառման ու իմպլեմենտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի 2025 թվականի մայիսի 23-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 7):

**Մասնակցում էին՝**

Իրավագիտության ամբիոնի վարիչ ի.գ.թ. Ի. Իսկանդարյանը, ամբիոնի դասախոսներ՝ ի.գ.թ., դոցենտ Ա. Մելիքսեթյանը, ի.գ.թ., դոցենտ Ա. Թադևոսյանը, ի.գ.թ., դոցենտ Վ. Թորոսյանը, ի.գ.թ. Դ. Սարգսյանը, ի.գ.թ. Զ. Սմբատյանը, ի.գ.թ.

Ս. Իսկանդարյանը, Ի.գ.թ. Կ. Բատիկյանը, Լ.Զիրոյանը, Մ. Համբարձումյանը, Գ. Ադոնցը, Զ. Մկրտչյանը, Ա. Թորոսյանը, Ա. Նահապետյանը, Ա. Կոչուբակը:

### **Ատենախոսության թեմայի արդիականությունը, կառուցվածքը և հիմնական բովանդակությունը**

Թեկնածուական ատենախոսությունն անդրադառնում է քրեակատարողական իրավունքի տեսության, իրավակիրառ գործունեության և դատական պրակտիկայի համար արդիական թեմայի: Ազատագրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության կանոններն առնչվում են պատիժների նպատակների հետ, ուստի և, կարևոր են հանցանքների հետագա կանխման և վերասոցալականցված անձին հասարակություն վերադարձնելու տեսանկյունից: Թեման նվիրված է դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների հայեցակարգային մոտեցումներին, դասակարգման հնարավորություններին և վարվեցողության չափորոշիչների կիրառման հնարավորությունների վերլուծությանը ներպետական մակարդակում:

Հեղինակը հետազոտության արդիականությունը հիմնականում պայմանավորել է քրեակատարողական ոլորտում պետության վերականգնողական ընդգծված քաղաքականություն վարելու, միջազգային մակարդակում ընդգծված մարդակենտրոն և ժողովրդավար սկզբունքները փոխառելու միտումով: Այդ կապակցությամբ հեղինակը որպես ուսումնասիրության հիմնական նպատակ սահմանել է դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների և ազատագրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության ներպետական և միջազգային իրավակարգավորումների, առանձին կատեգորիայի դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, դրանց կիրառման հիմնախնդիրների բացահայտումը ու լուծման հնարավորությունների վերաբերյալ առաջարկությունների մշակումը: Առաջադրված նպատակին համապատասխան հեղինակն առաջադրել է խնդիրներ և դրանց լուծման ու քննարկման համար սահմանել ատենախոսության տրամաբանական կառուցվածք և բովանդակություն:

Այսպիսով ընտրված թեմայի արդիականությունն ու կարևորությունը կասկած չեն հարուցում:

### **Ատենախոսության գիտական նորույթը**

Ատենախոսությունում հեղինակը մանրամասնորեն ուսումնասիրության է ենթարկել վերաբերելի տեսական, օրենսդրական, տեղեկատվական նյութեր և գնահատականի է արժանացրել մի շարք տեսական դրույթներ, որոնք պետք է ենթարկվեն ժամանակակից ըմբռնման և հստակեցման: Մասնավորապես, ըստ հեղինակի նորովի մոտեցում պետք է ցուցաբերվի «Դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչ» եզրույթին, այն դասակարգելով պարտադիր կամ խորհրդատվական (ոչ պարտադիր) բնույթ ունեցողների, ինչը կնպաստի քրեակատարողական քաղաքականության զարգացմանը: Բացի այդ, հեղինակը հիմնավորել է, որ պետք է զարգացնել պատժի անհատական պլանավորման, դատապարտյալի ռիսկերի և կարիքների գնահատման գործիքները և պատժի կրման ընթացքում առավել ուշադրություն դարձնել ոչ թե նախկինում վերջինիս կատարած արարքին, այլ վարքագծի դինամիկային: Այս համատեքստում նշանակալի է օտարերկրացի դատապարտյալների նկատմամբ նշանակվող պատժի նպատակի իրականացման իրագործելիության վերաբերյալ պաշտպանության ներկայացվող դրույթը:

Իրականացնելով ազատազրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչների ուսումնասիրություն և եզրահանգելով, որ դրանց գերակշիռ մասը ներդրված է «Օրենսդրությունում՝ հեղինակը վեր է հանել է մի շարք գործնական և տեսական խնդիրներ և կատարել համապատասխան առաջարկներ: Գործնական մակարդակում կարևորվում է հեղինակի կողմից ներկայացված օտարերկրյա դատապարտյալների՝ իրենց հասանելի լեզվով հաղորդակցվելու իրավունքի ապահովումը, քանզի այդ նպատակով թարգման ներգրավելու լիազորությունը նորմատիվ ակտերով հասցեագրված չէ որևէ իրավասու սուբյեկտի: Այս իմաստով օրենսդրական մակարդակով հարցի կարգավորումը ժամանակի հրամայականն է: Բացի այդ, հեղինակն առաջ է քաշել քրեակատարողական օրենսդրությունում «խոշտանգում»

եզրույթը ներդնելու գաղափարը՝ փորձելով հիմնավորել, որ քրեական օրենսգրքով սահմանված հանցակազմը տարբերվում է դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչներին համապատասխան «խոշտանգում» եզրույթից:

Ատենախոսության հետ ներկայացված սեղմագիրն ամփոփ արտացոլում է պաշտպանության հանվող դրույթները, հետազոտության տեսական, մեթոդաբանական հիմքը, գիտագործնական արժեքը և ատենախոսի հիմնական եզրահանգումները:

### **Ատենախոսության նշանակությունը տեսական և գործնական կիրառությունների համար**

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը պայմանավորված են ընտրված թեմայի հրատապությամբ: Այս առումով պետք է նկատել, որ վերջին տասնամյակների ընթացքում հետազոտված թեման, որպես այդպիսին, չի ենթարկվել տեսական մակարդակով համապարփակ ուսումնասիրության, մինչդեռ, թե օրենսդրական դրույթների փոփոխությունները, և թե իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրները, ինչպես նաև քրեակատարողական իրավունքի տեսությունում նշված թեմայի հետ կապված հարցերի վերաբերյալ ոչ միատեսակ ըմբռնումները, օբյեկտիվորեն վկայում են նման հետազոտության պահանջի առկայության մասին, որը կկարողանա առաջարկել այդ խնդիրներին համարժեք լուծումներ: Հետազոտության արդյունքների հիման վրա ներկայացված օրենսդրական առաջարկությունները կարող են կիրառվել ՀՀ քրեակատարողական օրենսդրության լավարկման նպատակով, նպաստել իրավակիրառ պրակտիկայում առկա հիմնախնդիրների լուծմանը:

### **Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ**

Դրական արձանագրումների հետ մեկտեղ աշխատանքի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ դիտողությունները:

1. Հեղինակի կողմից առաջարկվող 2-րդ դրույթը միջազգային-իրավական չափորոշիչներ սահմանող իրավական ակտերի դասակարգման վերաբերյալ դժվար է գնահատել որպես պաշտպանության համար ներկայացվող դրույթ, քանզի դրանում նշված պնդումները պաշտպանության կարիք չունեն, այնքանով որքանով մասնագիտական շրջանակներում լայնորեն շրջանառվող մոտեցումներ են:
2. Եզրահանգումներում հեղինակն առաջարկում է մի դեպքում ամրագրել «բանտարկյալ» եզրույթը, ապա փաստում է, որ «բանտարկյալ» միջազգային-իրավական եզրույթի օգտագործումը ներպետական օրենսդրական մակարդակում խնդրահարույց է: Սրանից բխեցվել է պաշտպանության հանվող 3-րդ դրույթը, որով հեղինակը առաջադրում է եզրույթի լայն և նեղ իմաստներ: Հեղինակն աշխատանքում բավարար չափով չի բացահայտել, թե ինչում է կայանում գիտական նորույթը և ինչ գիտական արժեք այն կարող է ներկայացնել:
3. Պաշտպանության ներկայացվող դրույթներից 5-րդում, այնուհետև, եզրահանգումների 9-րդ կետում, ատենախոսն առաջարկում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքում համապատասխան փոփոխությունների միջոցով սահմանել և տարբերակել խուզարկության երկու տեսակ՝ նախատեսված և ոչ նախատեսված, որոնք միմյանցից հստակ կտարբերվեն իրականացման մեխանիզմներով և նպատակներով: «Նախատեսված խուզարկությունն», ըստ հեղինակի՝ քրեադատավարական ընթացակարգերի հիման վրա իրականացվող խուզարկությունն է: Հարկ է նշել, որ քրեադատավարական խուզարկությունը քրեակատարողական օրենսդրությամբ սահմանելը և տեսական և գործնական առումներով հիմնավորված չի կարող համարվել, հատկապես հաշվի առնելով, որ խուզարկությունը՝ որպես քննչական գործողություն, արդեն իսկ սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով և ևս մեկ անգամ քրեակատարողական օրենքով սահմանելը որևէ կերպ հիմնավորված չէ: Բացի այդ, քննարկվող դրույթն չի մտնում ԺԲ.00.05.- «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»

մասնագիտության շրջանակի մեջ և մեր կարծիքով՝ հեղինակը դուրս է եկել ուսումնասիրության ոլորտից:

4. Պաշտպանությանը ներկայացվող 6-րդ դրույթում նշվել է, որ «Քրեակատարողական ծառայության գործունեության որակը հանդիսանում է դատապարտյալների վերասոցիալականացման և վերաինտեգրման երաշխիքը, ուստի մի կողմից Քրեակատարողական ծառայության համակարգում առկա թափուր՝ առավելապես կրտսեր խմբի պաշտոնների թիվը, իսկ մյուս կողմից առկա կադրերի մասնագիտական դեֆորմացիան ու դրա հաղթահարման ուղղությամբ քայլեր չիրականացնելն ուղիղ ազդում են դատապարտյալների վերասոցիալականացման և վերաինտեգրման արդյունավետությանը:» Բնավ կասկածի տակ չդնելով պետական ծառայության որակի անհրաժեշտությունը, պետք է նկատել, որ նման դրույթը չունի գիտական հենք, ավելին՝ այն դուրս է նաև ատենախոսության թեմայից և չի բխում նաև հետազոտման խնդիրներից:

5. Ատենախոսության եզրահանգումների 7-8-րդ կետերում հեղինակն անդրադառնալով քրեակատարողական հիմնարկներում իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներին, արձանագրել է, որ այդ գործիքներն օրենսդրական մակարդակում թերի են և չեն արտացոլում այն տարբերությունները, որոնք բնորոշ են ռեժիմային գոտուն: Այդ կապակցությամբ, հեղինակն առաջարկել է համապատասխան օրենսդրական փոփոխությունների միջոցով առանձին գլխով նախատեսել քրեակատարողական հիմնարկների տարածքում կատարվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, այն կատարելու լիազորություններ ունեցող անձանց շրջանակը և այն երաշխիքները, որն ունի անձը, ով գտնվում է այդ հիմնարկում:

Նախ, պետք է նշել, որ այս դեպքում հեղինակը շեղվել է մասնագիտական ուղղվածությունից և քննարկել է հարցեր, որոնք առնչվում են ԺԲ.00.04 մասնագիտացմանը: Մասնավորապես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 73-րդ հոդված 1-ին մասը սահմանում է, որ քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեությունն ապահովելու, քրեակատարողական հիմնարկներում նախապատրաստվող հանցագործությունները կանխելու և բացահայտելու նպատակով իրականացվում է օպերատիվ-հետախուզական

գործունեություն: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթի շրջանակներում քրեակատարողական հիմնարկներում կարող են իրականացվել գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Վերջին գործողություններն իրականացնում են քրեակատարողական հիմնարկների օպերատիվ ստորաբաժանումները, ինչպես նաև նման լիազորություններով օժտված այլ մարմիններ:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանել է օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, որոնք կարող են իրականացվել քրեակատարողական հիմնարկներում: Այսինքն, հեղինակի բարձրացված հարցն օրենսդրական մակարդակով արդեն իսկ կարգավորված է և ատենախոսը չի հիմնավորել, որ նման առաջարկությունը նորույթ է պարունակում:

6. Թեև հեղինակի կողմից աշխատանքի 3-րդ գլխով առաձին անդրադարձ է կատարվել առանձին կատեգորիայի դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչներին, սակայն որևէ անդրադարձ առկա չէ ազատարգրկման դատապարտված տրանսգենդերների հետ վարվեցողության միջազգային ստանդարտներին: Կարծում ենք, այս կատեգորիայի անձանց պահման վայրի /հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում նման անձանց պահման վայրի ընտրության հարցում տարատեսակ կարծիքները/, վարվեցողության առանձնացված չափանիշների հրամայականն արդիկական է, և հետազոտությունն առավել շահեկան դիրքում կլիներ, եթե ատենախոսը անդրադառնար նաև նշված անձանց հարցերին:

### **Եզրակացություն**

Ատենախոսության թեման և բովանդակությունը, բացառությամբ վերը նշված դիտարկումների, ընդհանուր առմամբ, համապատասխանում են ընտրված մասնագիտությանը: Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան:

Սույն կարծիքում նշված դիտողություններն, ըստ էության, կարող են հաղթահարվել մասնագիտական խորհրդում հաջողությամբ պաշտպանելու դեպքում հաշվի առնելով, որ դիտարկումների պատասխանները աշխատանքում լիարժեք արտացոլված չեն:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Արփի Աշոտի Լազարյանի՝ «Ազատագրկման դատապարտված անձանց հետ վարվեցողության միջազգային-իրավական չափորոշիչները և դրանց կիրառման ու իմպլեմենտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը, որոշակի վերապահումով կարելի է գնահատել որպես դրական գիտական աշխատանք, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին և հեղինակը բարեհաջող հրապարակային պաշտպանության դեպքում կարող է արժանանալ ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀԵՀ Իրավագիտության ամբիոնի վարիչ՝  ի.գ.թ., Ի. Իսկանդարյան

Հաստատում եմ Ի. Իսկանդարյանի ստորագրությունը

ՀԵՀ Գիտական խորհրդի քարտուղար՝  ի.գ.թ., Ղոցենտ, Վ.Թորոսյան